ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, PSYCHOLOGY, ПСИХОЛОГИЯ

ԾՆՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՒՆԵՑԱԾ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՄԻՋԵՎ ԿԱՊԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ *

ՀՏԴ 159. 9 *DOI: 10.52063/25792652-2025.1.24-200*

ԴԻԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ
Երևանի պետական համալսարանի
հոգեբանության գիտահետազոտական կենտրոնի գիտաշխատող,
հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
dianasargsyan@ysu.am
ORCID: 0000-0002-3058-9069
Scopus Author ID: 57777857900

ՍԱԹԵՆԻԿ ԱՐՇԱԿՅԱՆ
Երևանի պետական համալսարանի
հոգեբանության գիտահետազոտական կենտրոնի
կամավոր հետազոտող, մագիստրոս,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
satenik.arshakyan@edu.ysu.am
ORCID: 0009-0005-0954-9483

Հոդվածում ներկայացված է ծնող-երեխա փոխհարաբերությունների թեման, որտեղ շեշտադրված է երեխայի նկատմամբ վերաբերմունքի և ծնողների արժեքային համակարգի միջև կապը: Հոդվածի նպատակն է դուրս բերել ծնողների հիմնարար արժեքներն ու համոզմունքները, որոնք ազդում են երեխաների նկատմամբ վերաբերմունքի ոճերի ընտրության վրա:

Մեր խնդիրն է իրականացնել հետազոտություն ծնողների շրջանում, գնահատել և դուրս բերել մայրերի և հայրերի՝ երեխաների նկատմամբ ունեցած վերաբերմունքի ոճերը, արժեքային կողմնորոշումները և դիտարկել դրանց միջև հնարավոր փոխազդեցությունները:

Հետազոտության նորույթը նրանում է, որ, օգտագործելով հոգեբանական հետազոտությունների որակական և քանակական մեթոդներ, առանձնացրել ենք ծնողական արժեքների և վերաբերմունքի ոճերի միջև հարաբերակցական կապեր, որոնք կարող են կիրառական ելք լինել պրակտիկ հոգեբանության ոլորտում:

Հիմնական արդյունքները վկայում են, որ ծնողի արժեքային համակարգը երեխայի նկատմամբ ձևավորվող վերաբերմունքի հիմնարար գործոններից մեկն է և ազդում է ոչ միայն ընտրված վերաբերմունքի ոճերի կառուցվածքի վրա, այլև՝ հարաբերությունների որակի:

* Հոդվածը ներկայացվել է 17.02.2025թ., գրախոսվել՝ 19.03.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.04.2025թ.:

Հիմնաբառեր՝ *ծնող-երեխա հարաբերություններ, վերաբերմունքի ոճ, կոմֆորմիզմ, ավանդապաշտություն, գերխնամք, անձի (ծնողների) արժեքներ, վերաբերմունքի ոճերի և արժեքների հարաբերակցություն:*

Ներածություն

Ժամանակակից հասարակությունը աննախադեպ տեմպով փոփոխություններ է կրում կյանքի տարբեր ոլորտներում: Փոփոխվում են դրդապատճառները, նորմերը, տնտեսական և ռազմաքաղաքական իրավիճակները, ինչպես նաև սովորույթներն ու ավանդույթները: Այս փոփոխությունների համատեքստում մարդկանց արժեհամակարգի առանձնահատկությունները դիտարկվում են բազմաթիվ գիտական ուսումնասիրություններում, որտեղ խստագույնս կարևորվում է ընտանիքի և ծնողների դերը: Հայտնի է, որ գրեթե բոլոր արտաքին սոցիալական խնդիրներն ու փոփոխություններն անմիջական ազդեցություն են ունենում ընտանիքի վրա՝ արտացոլվելով նրա արժեհամակարգում: Ընտանիքում ծնողների արժեքները և ժամանակակից կյանքում ձևավորվող երեխաների նկատմամբ նրանց վերաբերմունքը երբեմն հանգեցնում են բարդ փոխհարաբերությունների և սերունդների ավելի սուր բախումների: Ընտանիքի և ամուսնության ինստիտուտի ճգնաժամի և վերափոխման խնդիրը ոչ միայն ժամանակակից սոցիալ-մշակութային և քաղաքական-տնտեսական իրավիճակի կարևորագույն խնդիրներից է, այլև՝ ժողովրդագրական հիմնախնդիրների լուծման որոշիչներից մեկը, որը մեծ ազդեցություն ունի հասարակության և պետության զարգացման ռազմավարությունների վրա:

Ծնողական վերաբերմունք և ընտանեկան արժեքներ

Ամուսնությունը և ընտանեկան հարաբերությունները ձևավորվում և զարգանում են ընտանիքում որպես բազմաբնույթ միջանձնային շփումների և, ընդհանրապես, անձի սոցիալ-հոգեբանական կողմի արժեքների և ակնկալիքների ամբողջական համակարգի արտացոլում: Ընտանիքում են ձևավորվում հասարակությունում ընդունված նորմերի ընկալումը (Ալավերդյան 69), հասարակական գործունեության ու հարաբերությունների նկատմամբ վերաբերմունքը (Պալիվանովա 2015), կյանքի փիլիսոփայության և կենսակերպի մասին պատկերացումները (Ադլեր 85): Անձը, որի զարգացումը երկարատև և բազմակողմանի գործընթաց է, որը ներառում է ինչպես տարիքային, ֆիզիոլոգիական, սոցիալական, վարքային, այնպես էլ արժեքային ոլորտում փոփոխություններ, կախված է նրանից, թե ընտանիքում հարաբերությունների և վերաբերմունքի ինչպիսի ոճ է գերակշռում: Առավելապես ծնողական վերաբերմունքի ոճը վերաբերմունքն է երեխային, նրա կատարած գործողություններին և անհատական առանձնահատկություններին, ծնողի կողմից երեխայի վրա ազդեցության որոշակի տեխնիկայի և մեթոդների օգտագործումն է, որը արտահայտվում է երեխայի հետ բանավոր խոսքի և փոխազդեցության յուրօրինակ ձևով: Խնդիրները որոնք ծագում են ծնող-երեխա հարաբերություններում՝ կապված երեխայի անհնազանդության, կամակորության, կամ վարքային այլ խնդիրների հետ, ընտանիքում մեծապես ոչ ճիշտ հարաբերությունների արդյունք են (Հարությունյան Ն., 121-131, Гиппенрейтер 214):

Ծնողների արժեհամակարգը, որը ձևավորվում է նրանց հոգեկան արտացոլմամբ, հիմնաքարային կետ է, որից ծագում և ձևավորվում են երեխա ունենալու, երեխա խնամելու, դաստիարակելու և հարաբերություններ կառուցելու միտումը: Ծնողական վերաբերմունքի ոճը նրա անհատականության և արժեքային կողմնորոշման բնութագիր է, որը նկարագրում է վարքի ցանկացած մեթոդ կամ ձև: Ա. Ադլերը առաջին անգամ ներկայացրեց «ոճ» տերմինը և բացահայտեց «պաշտպանական ռազմավարությունների և փոխհատուցման տեխնիկայի մի շարք, որ բնորոշ է սուբյեկտին՝ ի պատասխան անմիջական սոցիալական միջավայրի

ազդեցության», ինչպես նաև դիտարկեց դրանք ոչ միայն ծնողների վերաբերմունքի ոճում, այլև ձևավորվող անձի՝ երեխայի «կյանքի ոճում»* (Ադլեր 130-138): Ընտանիքի կառուցվածքը սահմանվում է որպես ընտանեկան վարքագծի, ընտանեկան սովորույթների, ընտանիքի ներսում յուրահատուկ և մտերմիկ հարաբերությունների հաստատված համակարգ, որը դրսևորվում է ընտանիքի անդամների վերաբերմունքով միմյանց և կատարվող իրադարձությունների նկատմամբ:

Հետազոտության նպատակն է դուրս բերել և հոգեբանական վերլուծության ենթարկել ծնողների արժեհամակարգով պայմանավորված երեխայի նկատմամբ վերաբերմունքի ոճի ընտրությունը:

Հետազոտության պլանավորում

Հետազոտությունը նախագծվել, մեթոդները ընտրվել և մշակվել են ԵՊՀ հոգեբանության գիտահետազոտական կենտրոնում: Հետազոտության տվյալների առաջնային վերլուծությունից դուրս են բերվել 53 վալիդ արդյունքներ (29 մայրեր և 24 հայրեր, որոնք 25-ից 48 տարեկան են): Օգտագործվել է Շ. Շվարցի արժեքային կողմնորոշման գնահատման թեստը, որից դուրս են բերվել **ինքնավարություն, հեդոնիզմ, ձեռքբերումներ, իշխանություն, անվտանգություն, կամեցողություն, կոնֆորմություն**, **ավանդականություն, ունիվերսալիզմ, ստիմուլյացիա** արժեքները (Խաչատրյան և ուրիշներ 50-57): Ընտրվել է նաև Ա. Յ. Վարգ Վ. Վ. Ստոլին ծնողական հարաբերությունների տիպի որոշման մեթոդիկան: Ծնողների վերաբերմունքը այս մեթոդիկայում մեկնաբանվում է որպես երեխայի նկատմամբ տարբեր զգացմունքների համակարգ, նրա հետ հաղորդակցվելու վարքագծային հատուկ մոդել, երեխայի բնավորության և անհատականության ընկալման և ըմբռնման առանձնահատկությունների ամբողջություն: Թեստը դուրս է բերում վերաբերմունքի հետևյալ մոտեցումները՝ ընդունում - մերժում, համագործակցություն, սիմբիոզ, վերահսկողություն, վերաբերմունք երեխայի անհաջողությունների նկատմամբ (Հարությունյան 143): Դիտարկել ենք նաև ծնողական վերաբերմունքի մեկ այլ մոտեցում՝ կիրառելով PARI մեթոդիկան: Հարցարանը նախատեսված է ուսումնասիրելու ծնողների վերաբերմունքը ընտանեկան կյանքի տարբեր փոխհարաբերություններում: Դրանցից 8-ը բնութագրում է վերաբերմունքը ընտանիքի դերի նկատմամբ, իսկ 15-ը վերաբերում է ծնող-երեխա հարաբերություններին (Ավանեսյան Հ. , Գալստյան Ա. և ուրիշներ 216):

Հետազոտության արդյունքների վերլուծություն

Հետազոտության տվյալների վերլուծությունները կատարել ենք համապատասխան մաթ-վիճակագրական գործիքակազմով՝ կիրառելով միջին արժեքների և ստանդարտ շեղման չափում, Ստյուդենտի t-ցուցիչի, Պիրսոնի գծային կոռելյացիայի մեթոդները: Այսպես՝ անդրադառնանք ստացված արդյունքներին*:

Կոմֆորմություն - Հետազոտվող հայրերի խմբում արդյունքների վերլուծության համաձայն կոմֆորմիզմն ունի միջին արտահայտվածություն: Կոմֆորմությունը բնորոշող նպատակը գործողությունների, հակումների և իմպուլսների զսպումն է, որը կարող է ճնշել և սահմանափակել մյուս արժեքների դրսևորումը կամ համապատասխան չլինել սոցիալական ակնկալիքներին ու նորմերին

---

* «Կյանքի ոճ»-ն ըստ Ա. Ադլերի անձի ձևավորման սկզբունքներից մեկն է, համաձայն որի անձը որոշում, պլանավորում և նախաձեռնում է իր ռազմավարությունը ապրելու, դիրքը և սոցիալական դերակատարումները, իր և արտաքին աշխարհի հետ հարաբերությունները:

* Նշենք, որ արժեքների ընդհանուր արտահայտվածությունը բաշխվել է հետևյալ կերպ. ավանդականություն, ինքնավարություն, իշխանություն արժեքները ունեն բարձր արտահայտվածություն հայրերի մոտ, ունիվերսալիզմ, հեդոնիզմ և կամեցողություն բարձր են մայրերի մոտ:

(հնազանդություն, ինքնավերահսկում, քաղաքավարություն, հարգանք ծնողների ու մեծահասակների հանդեպ): Տվյալ արժեքի միջին մակարդակի դրսևորումը ենթադրում է, որ հարցվողները հիմնականում ունեն երկու հակադիր դիրքորոշում՝ մի կողմից սոցիալ-հոգեբանական նորմերին հետևելու պատասխանատվություն, մյուս կողմից պահպանել անձնական դիրքորոշումները, երբ այդ նորմերը խոչընդոտում են նրանց նպատակների և ցանկությունների իրականացմանը (Schwartz 35):

Ավանդականությունը բնորոշող հատկանիշներն են՝ հարգանքը, նվիրումը և մշակութային կամ կրոնական սովորույթների ու գաղափարների ընդունումը (հարգանք ավանդույթների նկատմամբ, հնազանդություն, նվիրվածություն, հոգևոր կյանք): Ստացված արդյունքը ցույց է տալիս, որ հայրերի խմբում ավանդական արժեքները համեմատաբար ավելի բարձր արտահայտվածություն ունեն մայրերի խմբի հետ համեմատած: Ավանդական արժեքները հայրերի շրջանում դրևորվում են որպես որոշ ավանդույթների, մշակույթի, կրոնի բարոյական արժեքների նկատմամբ նշանակալի վերաբերմունք: Մայրերի շրջանում ավանդականությունը համեմատաբար ավելի ցածր է արտահայտված: Մայրերը ավելի ճկուն են փոփոխությունների նկատմամբ, հեռանում են ավանդական հայացքներից և ձգտում արտահայտել ավելի ժամանակակից հայացքներ և գաղափարներ, պահպանողական են որոշ հարցերում, բայց ավելի բաց են նոր գաղափարների նկատմամբ: Ավանդական արժեքները մեծ դերակատարում ունեն ընտանեկան հարաբերությունների և սոցիալական կարգի պահպանման գործընթացում՝ ձևավորելով հավասարակշռություն և անվտանգություն ապահովող բարոյական հիմքեր (Baumrind 56-58): Նման արժեքները հաճախ անբաժան են ընտանեկան դերի ճանաչումից և առանձնահատուկ կարևորություն ունեն ընտանիքում պարտականությունների բաշխման գործընթացում:

Նկար 1. Ծնողների արժեքային կողմնորոշումների արտահայտվածության միջինացված ցուցանիշները



«Կամեցողություն» արժեքը վերաբերում է ուրիշների բարեկեցության պահպանմանը և բարելավմանը, հատկապես այն մարդկանց նկատմամբ, որոնց հետ անձը հաճախակի շփվում է: Արժեքի միջին արտահայտվածությունը արտացոլում է հայրերի՝ իրենց շրջապատողների նկատմամբ բարեկեցության պահպանման

ձգտումը, հոգատարության և ուշադրության դրսևորումը, քանի որ ալտրուիզմն արտահայտում է հետաքրքրություն և պատրաստակամություն՝ հոգալու ուրիշների բարեկեցությունը: Այս տվյալները ցույց են տալիս, որ հայրերը գիտակցում են ընտանիքի անդամների կարիքները և պատրաստակամ են ցուցաբերելու աջակցություն, սակայն փակ և պահպանողական լինելը նրանց առավել զուսպ է դարձնում: Մայրերի խմբում կամեցողությունը ավելի բարձր է, բայց չի գերազանցում միջին ցուցանիշը: Ամեն դեպքում մայրերը ավելի հուզական են, և երեխաների նկատմամբ վերաբերմունքում ավելի շատ են առաջնորդվում կարեկցանքով, խղճով և հուզական ապրումներով:

Ունիվերսալիզմի արժեքին բնորոշ են ըմբռնումը, արժևորումը, հանդուրժողականությունը, ինչպես նաև մարդկանց և բնության բարեկեցության պահպանումը: Սա, ի տարբերություն կամեցողության, ուղղված է ոչ թե խմբից ներս, այլ ավելի համընդհանուր է ու գլոբալ՝ դեպի սոցիալական միջավայրը: Ունիվերսալիզմի արժեքը ծագում է մարդու ու խմբի գոյատևման պահանջմունքից: Այն ընդգրկում է երկու ենթախումբ. աշխարհի մարդկանց բարեկեցության ու բնության համար մտահոգություն (լայնախոհություն, սոցիալական արդարություն, հավասարություն, խաղաղություն, բնության հետ միասնություն, իմաստնություն, շրջապատի պահպանություն): Տվյալ արժեքի միջին արտահայտվածությունը ենթադրում է, որ հայրերը, հարգելով հասարակական ընդհանուր արժեքները, ճանաչում են այլոց իրավունքները, սատարում են համընդհանուր բարոյական սկզբունքներին՝ ինչպես մարդկային իրավունքների, այնպես էլ բնության պաշտպանության ոլորտում (Խաչատրյան և ուրիշներ 63): Մայրերի շրջանում համընդհանրությունն ավելի բարձր դրսևորում ունի: Այնուամենայնիվ, տվյալ արժեքը ցուցաբերում է միջին արտահայտվածություն, ինչը ցույց է տալիս, որ հայրերը այդ արժեքները չեն համարում առաջնային կամ գերակա իրենց առօրյա կյանքում:

Ինքնավարության արժեքի դրսևորումը բավականին բարձր է հայրերի մոտ, ինչը նշանակում է, որ նրանք կարևորում են անկախության, ստեղծարարության և ինքնաարտահայտման դրսևորումները: Նրանք խրախուսում են երեխայի ինքնուրույնությունը, ազատ կարծիքի արտահայտումը, ինչպես նաև խնդրահարույց իրավիճակներում լուծումներ գտնելու ինքնուրույն փորձը (հատկապես հայրերի և որդիների միջև հարաբերություններում սա ակնհայտ է): Ինքնուրույնության բարձր մակարդակը կարող է արտահայտվել որպես կառավարման կամ առաջնորդման կարիք, որտեղ հայրերը ոչ միայն պահանջում են անկախություն, այլև աջակցում են երեխային իրականացնելու իրենց գաղափարները ու որոշումները: Սանդղակը բնորոշող նպատակներն են ինքնուրույն մտածելակերպը, սեփական գործողությունների ընտրությունը, ստեղծարարությունը, աշխարհը ուսումնասիրելը, ազատությունն ու անկախությունը: Ինքնուրույնությունը կապված է կառավարման ու իշխանության պահանջմունքների հետ:

Ստիմուլյացիայի արժեքը գտնվում է միջին մակարդակի վրա, բնութագրվում է նորությունների հանդեպ պատրաստակամությամբ, կյանքում մարտահրավերների առկայությամբ, անընդհատ նոր ստիմուլներ և հետաքրքրություններ փնտրելով: Նորարարության բարձր պահանջ ունեցող մարդկանց ձանձրացնում է միապաղաղ կյանքը, և հնարավորության դեպքում նրանք ջանում են փոխել կյանքի ընթացքը: Տվյալ պարագայում ստիմուլյացիայի միջին ցուցանիշը վկայում է հայրերի՝ կայունության և կանխատեսելիության վրա կենտրոնանալու մասին: Նրանք հիմնականում խուսափում են ռիսկային կամ անկայուն գործողություններից և առաջնահերթությունը տալիս են կայունությանը:

Ձեռքբերումների կամ հաջողության հասնելու ձգտումներ ունենալու արժեքային կողմնորոշումը, որը առաջնային է անձի՝ հաջողության հասնելու և զարգացման առավելագույն մակարդակներին ձգտելու համար, բավական բարձր մակարդակ ունի հայրերի խմբում:

Հեդոնիզմը ծագում է օրգանական պահանջմունքներից և ենթադրում է հաճույքի միջոցով բավարարվածություն ստանալը: Հայրերն ունեն հետաքրքրություն հաճույքի և սեփական հանգստի նկատմամբ, բայց այն դրսևորվում է սահմանափակ՝ համաձայն ընտանիքի հիմնական առաջնահերթությունների: Հայրերն ներգրավվում են ընտանեկան ուրախ միջոցառումներին, բայց դրանք հիմնականում ուղղված են ընդհանուր բավարարվածությանը, ոչ թե միայն իրենց ցանկություններին: Նրանք խուսափում են այնպիսի գործողություններից, որոնք կարող են խոչընդոտել ընտանիքի կայունությունը կամ հակասել ընդհանուր բարեկեցությունը: Այսպիսով՝ հեդոնիզմի միջին ցուցանիշը ցույց է տալիս, որ հայրերն անձնական հաճույքների և զվարճությունների հարցում չափավոր են:

Իշխանության բարձր գնահատականը ցույց է տալիս նրանց վերահսկողության և առաջնորդության ձգտումը ընտանիքում: Հայրերը կարող են ավելի հաճախ վերցնել ընտանիքում հիմնական որոշումներ կայացնողի դերը: Վերլուծելով պատասխանները՝ կարելի է ենթադրել, որ հայրերը նախընտրում են գերակա դիրքի պահպանման այն սոցիալական խմբերում, որտեղ գտնվում են: Նրանք հակված են իմիջի պահպանմանը, վերահսկողության սահմանման, ինչպես նաև մեծ կարևորություն են տալիս սոցիալական հարգանքի ձեռքբերմանը:

Անվտանգության արժեքն ամենաբարձրն է երկու խմբերի համար, ինչը ցույց է տալիս ընդհանուր ձգտումը՝ ընտանիքին ապահովել կայունությամբ և պաշտպանվածությամբ: Ինչպես հայրերը, այնպես էլ մայրերը շեշտադրում են ընտանիքի կայունությունը՝ խուսափելով ավելորդ ռիսկերից և անորոշությունից: Այս արժեքի մոտիվացիան ներառում է ներդաշնակության, անվտանգության և հասարակական կայունության պահպանման նպատակները: Այն արտացոլվում է ընտանիքում՝ ընտանեկան կարգապահության, մաքրության, աջակցության և ընտանեկան անվտանգության ապահովման գործընթացում:

Փոփոխականների միջև կոռելյացիոն կապի վերլուծություն

Ավարտելով արդյունքների վերլուծությունը՝ մենք ուսումնասիրել ենք ծնողական վերաբերմունքի ոճերի և արժեքային կողմնորոշիչների միջև փոխհարաբերակցական կապերը (տե՛ս աղյուսակ 1.):

Աղյուսակ 1. Փոփոխականների միջև կոռելյացիոն վերլուծության արդյունքները

	Ընտանեկան հարաբերություններ	Զերհոգատարություն	Ագրեսիվության ճնշում
Համընդհանր.	**0.425**	0.240	0.154
Կոմֆորմիզմ	-0.094	-0.103	**-0.303**
Ավանդապաշտ.	-0.123	**-0.263**	-0.013

*Համընդհանրության և ընտանեկան հարաբերությունների դրական կապի (*r=0.425, p=0.001) գործակիցը ցույց է տալիս, որ համընդհանրության արժեքների արտահայտվածության աճը կապ ունի ընտանեկան հարաբերությունների որակի բարձրացման հետ: Այն ընտանիքներում, որտեղ գերակշռում են համընդհանրության արժեքները, անդամներն ավելի հակված են հարգելու միմյանց կարծիքները, բաց լինել փոխզիջումների համար և գնահատել ընտանեկան միասնականությունը: Այս արժեքները կարող են կանխել կոնֆլիկտները՝ խրախուսելով խաղաղ լուծումներ և աջակցելով փոխըմբռնման մշակույթին: Այս ամենի մասին է նաև փաստում համընդհանրության արժեքների և ընտանիքում հարաբերությունների հավասարությունը (r=0.339, p=0.01):

Ավանդապաշտության և գերհոգատարության (r=-0.263, p=0.05) հարաբերակցության գործակիցը ցույց է տալիս թույլ բացասական կապ: Սա նշանակում է, որ ավանդական արժեքների ուժեղ արտահայտվածությունը ընտանիքում կարող է որոշ չափով նվազեցնել գերհոգատարության դրսևորումները: Այսպիսի ընտանիքներում հավանական է, որ ուշադրությունը ավելի շատ կենտրոնանում է համընդհանուր կարգուկանոնի և պարտականությունների վրա:

Կոմֆորմիզմ և խուսափում կոնֆլիկտներից (r=-0.326, p=0.01) հարաբերության գործակիցը վկայում է չափավոր բացասական կապի մասին: Բացասական հարաբերակցությունը հուշում է, որ մեկ փոփոխականի աճի հետ մեկտեղ նվազում է մյուսը: Կոմֆորմիզմը կարող է արտահայտվել որպես սոցիալական նորմերի ներքին ընդունում, որտեղ մարդիկ մղվում են ավելի ակտիվորեն լուծելու կոնֆլիկտները՝ համաձայնություն հաստատելու կամ համագործակցելու նպատակով:

Աղյուսակ 2. Փոփոխականների միջև կոռելյացիոն վերլուծությունը՝ ըստ ծնողական վերաբերմունքի ոճերի

	Ընդունում-մերժում	**Համագործակցություն**	**Սիմբիոզ**
Համընդհանրություն	**0.323**	**0.367**	**0.542**
Հեդոնիզմ	-0.131	-0.122	**-0.286**
Ավանդապաշտություն	-0.241	-0.171	**-0.377**

Համընդհանրության արժեքների և ծնողական վերաբերմունքի սիմբիոզի (r=0.542, p=0.001) հարաբերակցության գործակիցը վկայում է ուժեղ դրական կապի մասին: Այնպիսի սկզբունքները, ինչպիսիք են՝ սոցիալական արդարությունը, սոցիալական նորմերի պահպանումը, խթանում են սիմբիոզի դրսևորմանը, որը բնորոշվում է աջակցելու պատրաստակամությամբ և կարեկցանքի դրսևորումներով: Ավանդապաշտության և սիմբիոզ (r=-0.377, p=0.01) չափավոր բացասական հարաբերակցությունը նշանակում է, երբ ընտանիքում գերակշռում են ավանդական արժեքները, սովորույթների խիստ պահպանումը, նվազեցնում է ընտանիքի անդամների միջև փոխօգնության և հոգատարության դրսևորումները: Այս արդյունքները ընդգծում են այն տեսակետը, որ ընտանեկան հարաբերություններում վերգրավվածությունը և սոցիալական արդարության սկզբունքները ուղղակիորեն կապ ունեն ընտանիքի ներսում փոխադարձ աջակցության և համերաշխության դրսևորումների հետ: Այն ցույց է տալիս, որ համերաշխության, փոխադարձության և ընտանիքում սիմբիոզի ձևավորման գործընթացում ակտիվ դերակատարում ունեն

հասարակական պատասխանատվության բարձր գնահատականը, սոցիալական նորմերին հետևելը և բարոյական սկզբունքներին հավատարիմ մնալու ձգտումը:

Հեդոնիզմ և սիմբիոզ (r=-0.286, p=0.01) հարաբերակցական բացասական կապը բնութագրվում է նրանում, երբ ընտանիքի անդամները առաջնահերթությունը տալիս են իրենց անձնական հաճույքներին, նրանց միջև համատեղ գործողություններն ու փոխադարձ կախվածությունը կարող է նվազել: Բացասական կապի թույլ բնույթը հուշում է, որ հեդոնիզմի ազդեցությունը սիմբիոզի վրա ամբողջովին խաթարող չէ, այլ կարող է լինել մեկ այլ գործոնների համակցությամբ առաջացող հետևանք:

Եզրակացություններ

Այսպես՝ ըստ մեր կողմից կատարված հետազոտությունների՝ հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

- Ծնողների արժեքային համակարգը էական ազդեցություն է ունենում երեխայի նկատմամբ նրանց վերաբերմունքի ոճերի ընտրության գործընթացի վրա: Բոլոր այն խնդիրները, որոնք ծագում են ծնողների և երեխաների միջև, նույնպես հանգուցալուծվում են ըստ արժեքային հիմքերի՝ ծնողների կողմից դրսևորելով ավանդապաշտություն, պահպանողականություն կամ ազատություն և իշխանություն և այլն:
- Կոռելացիոն վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ որոշ արժեքներ և վերաբերմունքային տարրեր, ինչպիսիք են՝ համընդհանրություն-սիմբիոզ, համընդհանրություն-ընտանեկան հարաբերություններ, համընդհանրություն-համագործակցություն, ունեն չափավոր դրական կոռելացիոն կապ:
- Միևնույն ժամանակ, փոփոխականները, ինչպիսիք են՝ ավանդականությունն ու սիմբիոզը, ցույց են տվել բացասական կորելացիոն կապ, ինչը նշանակում է, որ ընտանիքում մեկ փոփոխականի առկայությունը կարող է նվազեցնել մյուսի արտահայտվածությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ալավերդյան, Նելի. *Ավանդույթը որպես սոցիալական համակարգի կառուցարկման եղանակ (ուսումնական ձեռնարկ)*. Երևան, ԵՊՀ հրատ., 2019, էջ 160:
2. Գալստյան, Ալինա. *Մաթեմատիկական վիճակագրության մեթոդները հոգեբանական հետազոտություններում (ուսումնական ձեռնարկ)*. Երևան; Հեղ. հրատ. , 2015, էջ 88:
3. Խաչատրյան, Նարինե և ուրիշներ. *Մշակույթ, արժեքներ, համոզմունքներ, վարքի կողմնորոշիչները փոփոխվող հասարակությունում*. Երևան: Հեղ. հրատ. , 2014, էջ 164:
4. Հարությունյան, Նարինե. *Ընտանիքի կիրառական հոգեբանություն: Ուս. ձեռնարկ*. Երևան.: Հեղ. հրատ., 2021, էջ 244:
5. Հարությունյան, Նարինե. «Ծնողական վերաբերմունքով պայմանավորված դեռահասի քոփինգի ուսումնասիրումը լրիվ և ոչ լրիվ ընտանիքներում». *Գիտական Արցախ*, № 3 (18), 2023, Երևան, «ԱՐՑԱԽ» հրատարակչություն, 2023, էջ 121-131:
6. *Հոգեբանական գնահատման գործիքակազմ*. գրախոս՝ Հրանտ Ավանեսյան, կազմողներ՝ Գալստյան Ալինա, Պապոյան Վարդուհի և ուրիշներ, ԵՊՀ հրատ. , Երևան, 2024, էջ 236:

7. Սեդրակյան, Սեդրակ. *Ընտանիքի հոգեբանություն*. Երևան: Ուրարտու համալս., 2010, էջ 456:

8. Адлер, Алфред. *Воспитание детей. Взаимодействие полов*. Перевод с английского А. А. Валеева и Р. А. Валеевой. - Ростов н/Д: Феникс, 1998, с. 448.

9. Гиппенрейтер, Юлия. *Большая книга общения с ребенком*. Ю. Б. Гиппенрейтер — «АСТ», 2016, с. 214.

10. Гуляихин, Вячеслав. «Семья как субъект ранней правовой социализации». *Юридические исследования*, 2013. № 7. с. 56-66.

11. Кучмаева, Оксана и др. «Трансформация института семьи и семейные ценности». *Вестник славянских культур*: журнал. М.: Государственная академия славянской культуры, 2009, с. 20-29.

12. Baumrind, Diana “The influence of parenting style on adolescent competence and substance use”. *The Journal of Early Adolescence*, 11(1), 1991, pp. 56-95.

13. Schwartz, Shalom “Universals in the content and structure of values: Theoretical advances and empirical tests in 20 countries”. *Advances in experimental social psychology*, 25(1), 1992, pp. 1-65.

WORKS CITED

1. Alaverdyan, Neli (2019) *Avanduyt’y vorpes sots’ialakan hamakargi karruts’arkman yeghanak*, [Tradition as a Method of Building a Social System]. Yerevan, YSU Publishing House, 2019, 160 p. (in Armenian)

2. Galstyan, Alina (2015), *Mat’ematikakan vichakagrut’yan met’vodnery hogebanakan hetazotut’yunnerum*, [Mathematical Statistical Methods in Psychological Research] Yerevan; Auth. Publishing House, 2015, 88 p. (in Armenian)

3. Khach’atryan, Narine and at al. (2014), *Mshakuyt’, arzhek’nr, hamozmunk’ner, vark’i koghmnoroshich’nery p’vop’vokhvogh hasarakut’yunum*, [Culture, Values, Beliefs, Behavioral Orientations in a Changing Society], Yerevan. Auth. Publishing House, 2014, 164 p. (in Armenian)

4. Harut’yunyan, Narine (2021), *Yntanik’i kirarrakan hogebanut’yun* [Applied Family Psychology: Textbook], Yerevan: Auth. Publishing House, 2021, 244p (in Armenian)

5. *Hogebanakan gnahatman gortsik’akazm*, reviewer Hrant Avanesyan, Authors: Galstyan Alina, Papoyan Varduhi and at al. [Psychological Assessment Toolkit], YSU Publishing House, Yerevan, 2024, 236 p. (in Armenian)

6. Harut’yunyan, Narine. (2023) *Tsnoghakan verabermunk’ov paymanavorvats derrahasi k’vop’ingi usumnasirumy lriv yev voch’ lriv yntanik’nerum* [The study of Adolescent Coping Determined by Parental Behavior in Full and Incomplete Families], Scientific Artsakh, No. 3 (18), 2023, Yerevan, "ARTSAKH" Publishing House, 2023, pages 121-131 (in Armenian)

7. Sedrakyan, Sedrak (2010). *Yntanik’i hogebanut’yun* [Family Psychology] Yerevan: Urartu University, 2010, 456 p. (in Armenian)

8. Adler, Alfred (1998) *Vospitaniye detey. Vzaimodeystviye polov* [Raising Children. Interaction of the Sexes] Rostov N/D: Feniks, 1998. – 448 (in Russian)

9. Gippenreyter, Yuliya (2016) *Bol'shaya kniga obshcheniya s rebenkom* [The Big Book of Communication with a Child], "AST", 2016, 214 (in Russian)

10. Gulyaikhin, Vyacheslav (2013) *Sem'ya kak sub"yekt ranney pravovoy sotsializatsii*, [Family as a Subject of Early Legal Socialization] Legal research, 2013. No. 7. pp. 56-66. (in Russian)

11. Kuchmayeva, Oksana and at al. (2009) *Transformatsiya instituta sem'i i semeynyye tsennosti* [Transformation of the Family Institution and Family Values],

Bulletin of Slavic cultures: journal. Moscow: State Academy of Slavic Culture, 2009b, pp. 20-29 (in Russian)

12. Baumrind, Dinan “The Influence of Parenting Style on Adolescent Competence and Substance Use”. *The Journal of Early Adolescence*, 11(1), 1991, pp. 56-95.

13. Schwartz, Shalom “Universals in the Content and Structure of Values: Theoretical Advances and Empirical Tests in 20 Countries”. *Advances in experimental social psychology*, 25(1), 1992, pp. 1-65.

A STUDY OF THE RELATIONSHIP BETWEEN PARENTS' VALUE SYSTEM AND THEIR ATTITUDE TOWARDS CHILDREN

DIANA SARGSYAN
Yerevan State University, Research Center for Psychology,
Ph.D.in Psychology, Associate Professor,
Yerevan, the Republic of Armenia

SATENIK ARSHAKYAN
Yerevan State University,
Research Center for Psychology, Master Student

The article presents the topic of parent-child relationships, emphasizing the relationship between the attitude towards the child and the value system of parents. The aim of the article is to identify which basic values and beliefs of parents influence the choice of styles of attitude towards children.

Our task is to conduct research among parents, to assess and identify the styles of attitudes, value orientations of mothers and fathers towards their children and to consider possible interactions between them.

The novelty of the research is that, using qualitative and quantitative methods of psychological research, we have identified correlations between parental values and styles of attitude, which can be applied in the field of practical psychology.

The main results indicate that the parents' value system is one of the fundamental factors in the formation of attitudes towards the child and influences not only the structure of the chosen attitudinal styles, but also the quality of the relationship.

Keywords: *parent-child relationships, family roles and role stereotypes, attitude style, comformism, traditionalism, overprotectiveness, value analysis, correlation analysis of attitude styles and value system.*

ИССЛЕДОВАНИЕ ВЗАИМОСВЯЗИ МЕЖДУ СИСТЕМОЙ НРАВСТВЕННЫХ ЦЕННОСТЕЙ РОДИТЕЛЕЙ И ИХ ОТНОШЕНИЕМ К ДЕТЯМ

ДИАНА САРГСЯН
научный сотрудник научно-исследовательского центра психологии Ереванского государственного университета, кандидат психологических наук, доцент, г. Ереван, Республика Армения

САТЕНИК АРШАКЯН
магистрант, исследователь-волонтер научно-исследовательского центра психологии Ереванскогогосударственного университета, магистр, г. Ереван, Республика Армения

Статья посвящена теме взаимоотношений между родителями и детьми, особо акцентируется связь между отношением к ребенку и системой ценностей родителей. В статье исследуется, как основные ценности, убеждения и культурные нормы родителей влияют на выбор стиля их отношения к ребенку. С использованием качественных и количественных методов психологических исследований были выделены следующие основные типы родительских ценностей: автономия, гедонизм, власть, безопасность, конформизм, традиционность, универсализм и другие. Исследование рассмотрело связь этих ценностей с стилями отношения родителей, такими как симбиоз, принятие-отвержение, контроль, инфантилизм и другие. Основные результаты исследования показывают, что система ценностей родителей оказывает значительное влияние на формирование их отношения к ребенку.

Ключевые слова: *взаимоотношения родитель-ребенок, семейные роли и ролевые стереотипы, стиль отношения, конформизм, традиционализм, чрезмерная опека, анализ ценностей, корреляционный анализ стилей отношения и системы ценностей.*